

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Բնական գիտություններ

3, 2008

Естественные науки

ԿԵՆԱՐՈՒԹՅՈՒՆ

УДК 581.9+581.526

Ք. Գ. ԱՎԱԳՅԱՆ, Լ. Լ. ՕՍԻԹՅԱՆ, Ա. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ, Ա. Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՐՈՇ ԶԲՈՍԱՅՑԳԻՆԵՐԻ ԿԱՆԱԶ
ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻճԱԿԸ**

Անտառային կենսաբազմազանության կազմում առաջատար դեր են կատարում ծառերն ու թփերը, առաջացնելով ինքնատիպ և տնտեսական մեծ արժեք ունեցող անտառային բուսականություն: Շատ ծառատեսակները ու թփեր օժտված են վոշեպաշտպան, ծխապաշտպան և աղմկապաշտպան հատկություններով: Այդ տեսակները խիստ անհրաժեշտ են գերբնակեցված քաղաքներում և արդյունաբերական շրջաններում՝ տեղի միկրոկլիմայական և սանիտարահիգինիկ պայմանների բարելավման համար: Ուստի շատ քաղաքներում, այդ թվում և Երևանում, ստեղծվել են ծառայօգիներ, որոնք ունեն ոչ միայն գիտական, պրակտիկ, էսթետիկ, այլ նաև էկոլոգիական նշանակություն [1, 2]:

Մեր նպատակն է եղել ուսումնասիրել Երևան քաղաքի գրոսայօգիների ծառատեսակները, թփերը, դրանց կարգաբանական կազմը, համեմատական անալիզ կատարելով քացահայտել այն տեսակները, որոնք տարրեր պատճառներով վերացել են այզիների տարածքից, ներկայացնել այդ այզիների էկոլոգիական վիճակը: Ուսումնասիրվել են քաղաքի «Օղակաձև» (Վ. Մամիկոնյանի արձանի շրջակա տարածքից մինչև Մաշտոցի պողոտա ընկած հատվածը), ինչպես նաև Օպերայի և բալետի պետական թատրոնի շենքի հարևանությամբ գտնվող գրոսայօգիները:

«Օղակաձև» գրոսայգում կան ծառատեսակներ, որոնք հանդիպում են այզու ողջ տարածքում, բայց տարրեր քանակությամբ և տարրեր վիճակներով: Դրանցից են կաղնին, թխկին, թեղին, թթենին, հացենին, երկնածառը: Տարածված են հետևյալ թփերը՝ զիհիները, բաղրջուկ, տոսախ, ճապկի և այլն:

Վարդան Մամիկոնյանի արձանի շրջակա տարածքում ծառերը և թփերը քիչ են: Այզում գերակշռում են սև և սպիտակ թթենիները (*Morus nigra*, *M. alba*), հացենիները (*Fraxinus angustifolia*, *F. excelsior*), որոնք բարձիթողի վիճակում են: Շատ են երկնածառերը (*Ailanthus altissima*), արևելյան կաղնիները (*Quercus macranthera*), որոնք նույնպես առողջ չեն: Լավ վիճակում են օճառածառերը (*Sapindus drummondii*) և կեղծ ակացիաները (*Robinia pseudoacacia*): Հանդիպում են էլիպսատերև և ողորկ թեղիները (*Ulmus elliptica*, *U. laevis*),

երկու տեսակի թխկիներ (Acer negundo, A. trautvetteri), սպիտակ բարդի (Populus alba), արևելյան և թխկատերև սոսիներ՝ կիսաչոր վիճակում (Platanus orientalis, P. acerifolia): Թփերից հանդիպում են եղրևանին (Siringa), ցախակեռասը ու չինամված բաղրջուկը (Hibiscus), մերկասերմերից՝ գիհին և ռույան: Այզում ծառուղի են կազմում հսկա կաղնիները:

Այզու այս հատվածում կատարվել են հացենու նոր տնկարկներ:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի շրջակա տարածքում թեղիների մեծ մասը վնասված է: Այստեղ մեկ տարի առաջ աճում էին կտտկենիների (Sambucus nigra) խոշոր թփեր, որոնք այժմ հատված են: Թփերից հանդիպում են բաղրջուկը, եղրևանին: Որպես ցանկապատ այզում օգտագործվել են տոսախը (Buxus sempervirens), ցախակեռասազգիներից՝ բուրավետ ցախակեռասը (Lonicera caprifolium), ձյունապտղիկը (Symphoricarpos albus), կիապրոսը (Liquustrum vulgare), և լիաններից՝ կուսախաղողը (Parthenocissus quinquefolia): Հատկանշական է այն, որ այստեղ քիչ են բարձրաբուն երկնածառերը: Այզում հանդիպում են արծաթափայլ եղնի, խնձորենի (Malus orientalis), ծիրանենի (Armeniaca vulgaris), թեղի, օճառածառ:

Հախմատի տաճ շրջակայրում ծառերն ու թփերը առողջ են, խնամված: Զիակասկենիների (Aesculus hippocastaneum) նոր տնկարկներ են կատարվել: Գեղազարդ տեսք են ստացել թթենիները: Քիչ քանակությամբ հանդիպում է սոսի, գիհի (Juniperus oblonga), թեղի, օճառածառ:

Տնտեսագիտական համալսարանի դիմացի այզում կան երկնածառեր, որոնք տվել են բազմաթիվ շիվեր: Ցանկակի կլիներ, որ այս ծառերը գտնվեին մշտական հսկողության տակ: Հակառակ դեպքում, վերջիններս, շատ լավ հարմարված լինելով մեր կլիմայական պայմաններին, դուրս կմղեն մյուս ծառատեսակները: Զբոսայզում հանդիպում են դրախտածառեր (Cotinus coggygria) և բարդիներ: Այստեղ ձիթենազգիներից շատ է ֆորզիցիան (Forsythia intermedia), որի ծաղիկները շքել տեսք են տալիս գարնանային այզուն: Մեր հետպատությունների ընթացքում այստեղ հանդիպում էր նաև կարմրանը (Tamarix ramossissima), որը տարվա վերջին ամիսներին արդեն հատված էր:

Կամերային երածշտության տաճ շրջակայրում աճում է կատալպան (Catalpa bignonioides): Այզում հանդիպում ենք հացենու վնասված ծառերի, որոշ սոսիներ գտնվում են բարձիբողի վիճակում, այդ իսկ պատճառով բավականին վատ են աճում: Ամրուց «Օղակած» այզուց միայն այստեղ է, որ հանդիպում է բռնչատերև բշտիկապտուղը (Physocarpus opulifolia): Այս տարածքում թթենիները հատվել են: Ժամանակին աճում էին նաև զիցինիաներ, որի գեղեցիկ մանուշակագույն ծաղիկները զարդարում էին այզին, այժմ արդեն չկան:

Ա. Խսահակյանի արձանի շրջակայրում զբոսայզին առայժմ բավականին մշակված տեսք ունի: Սակայն շարունակվող բետոնապատման հետևանքով ծառերի արմատների մեծ մասը ենթակա է վնասման: Շատ են սոսիները, կաղնիները, հացենիները, թխկիները, բարդիները: Այստեղ հանդիպում են կատալպաներ, մետաքսափայլ ակացիա, հուղայածառեր (Cercis siliquastrum), զիեղիշիաներ (Gleditschia triacanthos), կենսածառեր, գիհիներ: Պտղատու ծառերից կան խնձորենի, ծիրանենի, թփերից՝ եղրևանի, կիապրոս, ձյունապտղիկ, բաղրջուկ, կտտկենի: Այզում կան նաև առևտրական կետեր, որոնց շուրջը որպես ցանկապատ օգտագործվել է տոսախը:

Ալ. Սալենդիարյանի անվան օավերայի և բալետի պետական թատրոնի շենքի հարևանությամբ գտնվող զբոսայգում հանդիպում են թզենի (*Ficus carica*) և ունարի (*Ziziphus jujuba*): Կամ նաև կենածառեր, զիհիներ, թխկիներ, ուռենիներ, պտղատու ծառերից՝ ծիրանենի, սերկվիլենի (*Cydonia oblonga*), բալենի, թփերից՝ բաղրջուկ, ճապկի (*Swida australis*), տոսախ, ասպիրակ (*Spiraea crenata*):

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային հարող պուրակում գերակշռող է կատալագաները: Առողջ տեսք ունեն սոճիները: Այզում շատ են կեղծ ակացիաները, օճառածառերը, կաղնիները քիչ են, այն է՝ իհվանդ: Պտղատու ծառերից հանդիպում են ծիրանենին, բալենին (*Cerasus vulgaris*), մասրենին (*Rosa karjahinii*), ընկույզենին (*Juglans regia*), թփերից՝ զիհին, բաղրջուկը, ցախակեռասը և ճապկին:

Ինչպես «Օղակաձև» այզում, այնպես էլ այստեղ բազմաթիվ առևտրական կետեր կան, այդ իսկ պատճառով այզու որոշ հատվածներ գտնվում են մշտական հսկողության տակ: Այստեղ ծառերն ու թփերը հիմնականում առողջ են ու խնամված, բայց դրա հետ մեկտեղ, այնտեղ, որտեղ կառուցվում են նոր շինություններ, կատարվում են ծառահատումներ:

Եղբակացություն: Հետազոտություններից պարզվում է, որ ուսումնասիրված զբոսայգիները հարուստ են ծառերի և թփերի արժեքավոր 52 տեսակներով, որոնք պատկանում են 43 ցեղի և 26 ընտանիքի: Հետազոտված զբոսայգիներում գերակշռող վարդազգիների (*Rosaceae*) ընտանիքն է՝ 8 տեսակ և 7 ցեղ: Զիթենազգիները (*Oleaceae*) ներկայացված են 4 ցեղով և 5 տեսակով, ցախակեռասազգիները (*Caprifoliaceae*)՝ 3 ցեղով և 6 տեսակով, թթազգիները (*Moraceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, բակլազգիները (*Fabaceae*), նոճազգիները (*Cupressaceae*), սոճազգիները (*Pinaceae*), ուռենազգիները (*Salicaceae*) և ցեղալպինազգիները (*Caesalpiniaceae*)՝ 2 ցեղով և 2 տեսակով, թխկազգիները (*Aceraceae*)՝ 1 ցեղով և 4 տեսակով, թեղազգիները (*Ulmaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, սոսազգիները (*Platanaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով: Մնացած 14 ընտանիքները ներկայացված են 1 ցեղով և 1 տեսակով:

Այս այգիներում, որտեղ կան գործող կրպակներ, ծառերն ու թփերը խնամված են: Սակայն նոր կրպակներ կառուցելու համար զբոսայգիներում բազմաթիվ ծառահատումներ են կատարվում:

Այգիներում առավել զգույշ պետք է լինել երկնածառերի նկատմամբ, որոնք, հեշտությամբ բազմանալով սերմերով և վեգետատիվ ճանապարհով, շատ կարծ ժամանակում զբավում են մեծ տարածքներ: Երկնածառերի ու կեղծ ակացիաների փոխարեն կարելի է տնկել սոֆորա, ծիակասկ, մետաքսափայլ ակացիա, հուլպայածառ, լորենի, ճապոնական սերկվիլենի, դրախտածառ, ֆորդիցիա, որոնք ունեն նաև գեղազգիտական արժեք:

Բուսաբանության ամքին

Ստացվել է 21.11.2007

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Լ.Վ. Հարությունյան Ս.Լ. Հայաստանի դեմոկրատիական: Հ. 1, 2: Եր., Լուս, 1985, 1986.
2. Վարданյան Ջ.Ա. Դերենք և կուսարնի Արմենի և կուլտուրա. Եր., 2003, ս. 370.

К. Г. АВАКЯН, Л. Л. ОСИПЯН, А. В. ПОГОСЯН, А. Л. МКРТЧЯН

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ ЗЕЛЕНЫХ НАСАЖДЕНИЙ НЕКОТОРЫХ
ПАРКОВ ГОРОДА ЕРЕВАНА

Резюме

Изучен видовой состав деревьев и кустарников некоторых парков города Еревана. Отмечены наиболее распространенные виды древесных и кустарниковых пород. Нами предлагается увеличить ассортимент зеленых насаждений за счет хвойных, лиан и деревьев, цветущих ранней весной. Обратить серьезное внимание на распространение айланта в парках, так как прорастая легко и быстро, он мешает нормальному росту других деревьев и кустарников, а также травянистых растений.

K. G. AVAGYAN, L. L. OSIPYAN, A. V. POGOSYAN, A. L. MKRTCHYAN

MODERN STATUS OF GREEN PLANTINGS OF SOME PARKS
OF YEREVAN CITY

Summary

The specific structure of trees and bushes of some parks of Yerevan city is studied. Most widespread kinds of wood and shrubs breeds are noted. We propose to increase assortment of green plantings at the expense of coniferous kinds, trees blossoming in the early spring and kinds of lianas. To turn a close attention to spreading the tree-of-heaven in parks the high degree of germination of its seeds, stirs to normal growth of other trees and bushes, and also grassy plants.